


ՄԵՆ ԱՐԵՎԵՐՏԱՅԱՆԸ ՀԱՅԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՄԵՁ



Հայաստանի գիտությունների ազգային ակադեմիայի ակադեմիկոս Մեն Սուրենի Արևշատյանը այն վաստակաշատ հայագետներից է, որոնք մեծ ներդրում են ունեցել հայագիտության, ի մասնավորի հայ փիլիսոփայության պատմության՝ որպես հայագիտության առանձին գիտակարգի ձևավորման, կայացման և զարգացման գործում: Անցյալ դարի 50-ական թթ. մուտք գործելով հայագիտության ասպարեզ՝ շուրջ վաթսուն տարվա ընթացքում նա գրել է այնպիսի արժեքավոր աշխատություններ, որոնցից յուրաքանչյուրը, առանձին վերցրած, կարող է պատիվ բերել ամեն մի գիտնականի:

Մեն Արևշատյանը ծնվել է 1928 թ. հունվարի 7-ին Երևանում, մտավորականի ընտանիքում: 1951 թ. նա գերազանցությամբ ավարտել է Երևանի պետական համալսարանի պատմության ֆակուլտետը, այնուհետև ՀԽՍՀ ԳԱ ասպիրանտուրայում (1951-1954 թթ.) մասնագիտացել է հայ միջնադարյան փիլիսոփայության պատմության մեջ: 1956 թ. պաշտպանել է թեկնածուական ատենախոսություն՝ XIV- XV դդ. նշանավոր աստվածաբան-փիլիսոփա, Տաթևի համալսարանի ուսուցչապետ Գրիգոր Տաթևացու փիլիսոփայական հայացքների վերաբերյալ: 1954-1959 թթ. Ս. Արևշատյանը եղել է ՀԽՍՀ ԳԱ փիլիսոփայության և իրավունքի բաժանմունքի գիտաշխատող: 1959 թ. նա աշխատանքի է անցել հին ձեռագրերի նորաստեղծ գիտահետազոտական ինստիտուտում՝ Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարանում՝ որպես սկզբնաղբյուրների գիտական թարգմանության բաժնի վարիչ: 1971 թ. Ս. Արևշատյանը պաշտպանել է «Փիլիսոփայական գիտության ձևավորումը Հին Հայաստանում» թեմայով ատենախոսությունը, որի համար 1972 թ. ստացել է փիլիսոփայական գիտությունների դոկտորի գիտական աստիճան: 1973 թ. նա ղեկավարել է Մատենադարանի հին բնագրերի ուսումնասիրման և հրատարակման բաժինը, համատեղության կարգով աշխատել որպես ՀԽՍՀ ԳԱ «Պատմաբանասիրական հանդեսի» պատասխանատու քարտուղար (1958-1960 թթ.), փիլիսոփայության և իրավունքի ինստիտուտի ավագ գիտաշխատող (1972-1979 թթ.), այնուհետև՝ այդ ինստիտուտի հայ փիլիսոփայության պատմության գիտաթեմատիկ խմբի գիտական ղեկավար: 1982 թ. մարտին նա նշանակվել է Մատենադարանի տնօրեն:

1982 թ. Մեն Արևշատյանն ընտրվել է ՀԽՍՀ ԳԱ թղթակից անդամ, 1996 թ.՝ ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս: Ակադեմիկոս Մեն Արևշատյանը շուրջ 25 տարի՝ 1982-2007 թթ., եղել է Մատենադարանի տնօրեն, և այդ տարիներին Մատենադարանը համարվել է 1500 ձեռագիր մատյաններով, հրատարակվել են

հարյուրից ավելի հայագիտական աշխատություններ, կազմակերպվել տարբեր կարգի գիտաժողովներ: 2007 թվականից առ այսօր նա Մատենադարանի կառավարման խորհրդի նախագահն է:

Ս. Արևշատյանը Երևանի պատվավոր քաղաքացի է, Հայաստանի Պետական մրցանակի դափնեկիր: 2008 թ. պարգևատրվել է ՀՀ կրթության և գիտության նախարարության ոսկե մեդալով, 2010 թ.՝ «Հայրենիքին մատուցած ծառայությունների համար» առաջին աստիճանի մեդալով, արժանացել է Հայ առաքելական եկեղեցու «Սուրբ Սահակ, Սուրբ Մեսրոպ» շքանշանի: Նա «Բանբեր Մատենադարանի» տարեգրքի գլխավոր խմբագիրն է, «Պատմաբանասիրական հանդեսի» և ՀՀ ԳԱԱ «Լրաբեր հասարակական գիտությունների» ամսագրի խմբագրական խորհրդի անդամ, Հայ-հնդկական բարեկամության ընկերության պատվավոր նախագահը, Եվրոպայի մշակույթի ընկերության և «Պո-Արաքս» ընկերության (Վենետիկ) անդամ, Փիլիսոփայական միջազգային ակադեմիայի, Բնության և հասարակության մասին գիտությունների միջազգային ակադեմիայի իսկական անդամ, «Արարատ» միջազգային ակադեմիայի (Փարիզ) թղթակից անդամ, ՀՀ ԳԱԱ փիլիսոփայության, սոցիոլոգիայի և իրավունքի ինստիտուտի գիտխորհրդի անդամ:

Ս. Արևշատյանի գիտական գործունեությունը բազմազիժ ու բազմակողմ է: Նա հեղինակ է ավելի քան 170 գիտական աշխատությունների, այդ թվում՝ 30 մենագրության ու բազմաթիվ հոդվածների, որոնք հիմնականում վերաբերում են հայ միջնադարյան փիլիսոփայության և մշակույթի պատմությանը: Ս. Արևշատյանի գրչին են պատկանում աշխատություններ, որոնք նվիրված են ինչպես միջնադարյան մտածողների փիլիսոփայական հայացքների վերլուծությանը, այնպես էլ առանձին ժամանակաշրջանների հայ փիլիսոփայական մտքի պատմության հետազոտությանը: Նրա յուրաքանչյուր աշխատությունն ուր խոսք է հայ փիլիսոփայապատմական գիտության մեջ: «Գրիգոր Տաթևացու փիլիսոփայական հայացքները» (1957 թ.) աշխատությունում նա առաջին անգամ հանգամանորեն վերլուծում և գնահատում է միջնադարյան հայ խոշորագույն մտածող Գր. Տաթևացու գոյաբանական, իմացաբանական, հասարակագիտական հայացքները, պարզում նրա տեղը և դերը հայ փիլիսոփայական մտքի զարգացման մեջ: «Փիլիսոփայական գիտության ձևավորումը Հին Հայաստանում (V-VI դդ.)» (1973) մենագրությունում նա Հին Հայաստանում փիլիսոփայական գիտության ձևավորումը դիտարկում է ազգային դպրության, ազգային ազատագրական պայքարի, հունարան դպրոցի թարգմանչական գործունեության, գիտական գիտելիքների ու աշխարհիկ մտքի ձևավորման պատմամշակութային լայն համատեքստում: «Միջնադարյան Հայաստանի փիլիսոփայական դպրոցների պատմության շուրջը (XIV դ.)» (1980) աշխատությունում առաջին անգամ լուսաբանել է XIII-XIV դդ. Հայաստանում և հարակից երկրներում կրոնամշակութային գործունեություն ծավալած լատին մտածողներ Բարդուղիմեոս Բոլոնիացու և Պետրոս Արագոնացու փիլիսոփայական հայացքները և ցույց տվել դրանց ազդեցությունը Գլաձոր-տաթևյան դպրոցի ներկայացուցիչների, ի մասնավորի Հովհան Որոտնեցու և Գրիգոր Տաթևացու ուսմունքների վրա: Անդրադարձնալով լատին մտածողների և նրանց հայագրի համախոհների թողած հոգևոր ժառանգության հարցին՝ Ս. Արևշատյանը իրավացիորեն նկատում է, որ նրանց աշխատությունները չպետք է դուրս թողնվեն սլյակ ժամանակաշրջանի հայ մշակույթի պատմությունից, նախ, այն պատճառով, որ կաթոլիկ մտածողները, նրանց կողմից ստեղծված գիտակրթական օջախները զգալի

ավանդ ներդրեցին հայ փիլիսոփայական մտքի զարգացման գործում, երկրորդ, նրանց ստեղծած ամբողջ գրականությունը՝ թարգմանական և ինքնուրույն, միջնադարյան հայ գրականության անկապտելի մասն է կազմում: Մեթոդաբանական այսպիսի դիրքորոշումը, խարսխված լինելով պատմականության սկզբունքի վրա, հնարավորություն է տալիս ոչ միայն ամբողջական ձևով ներկայացնելու միջնադարյան հայ փիլիսոփայության պատմությունը, դրա զարգացման ընթացքը, այլև պարզելու փիլիսոփայական-գաղափարական տարբեր հարցերի քննարկման ժամանակ եվրոպական և հայ մտածելակերպի ընդհանրություններն ու տարբերությունները:

Հայ փիլիսոփայապատմական գիտության ու մշակույթի պատմության զարգացումը անհնար է պատկերացնել առանց աղբյուրագիտական հրապարակումների: Այս ասպարեզում անուրանելի են ակադեմիկոս Ս. Արևշատյանի ծառայությունները: Ս. Արևշատյանը, այլ գիտնականների աշխատակցությամբ, պատրաստել, ծանոթագրել, աշխարհաբար և ռուսերեն թարգմանությամբ ներկայացրել է մատենագրական այնպիսի հուշարձաններ, ինչպիսիք են՝ «Հերմեայ Եռամեծի առ Ասկղեպիոս սահմանք», Ջենոն Իմաստասերի «Յադագս բնութեան», Հովհաննես Երզնկացու (Պլուզի) «Ի տաճկաց իմաստասիրաց գրոց քաղեալ բանք», «Անանուն Մեկնութիւն Ստորոգութեանցն Արիստոտելի», Անանիա Շիրակացու «Տիեզերագիտությունը», Գրիգոր Տաթևացու «Սողոմոնի առակների մեկնությունը» և այլն: Մատենագրական մի քանի կարևոր հուշարձանները ներկայացնելու գործում նա աշխատակցել է բանասիրական գիտությունների դոկտոր Քնարիկ Տեր-Դավթյան-Արևշատյանի հետ: Անգնահատելի է նաև Ս. Արևշատյանի խմբագրական գործունեությունը: Նրա խմբագրությամբ են լույս տեսել Հովհան Ռոտունեցու «Վերլուծութիւն Ստորոգութեանցն Արիստոտելի», Սմբատ Սպարապետի «Դատաստանագիրք» և Վահրամ Ռաբունու «Մեկնութիւն Ստորոգութեանցն Արիստոտելի» երկերը՝ քննական բնագրերով և ռուսերեն թարգմանություններով: Նա խմբագրել է նաև Ս. Արևշատյանի «Հայոց հին գրականության պատմություն» և Վ. Չալոյանի «Հայոց փիլիսոփայության պատմություն» ռուսերեն մեկ հատորյակներն ու Եղիշեի «Վարդանանց պատմության»՝ Հովսեփ Օրբելու ռուսերեն թարգմանությունը, Ք. Տեր-Դավթյանի «Հայկական վարքեր և վկայաբանություններ (V-XVII դդ.)», «Հայոց նոր վկաներ» ռուսերեն թարգմանությունները:

Հատկապես մեծ է Ս. Արևշատյանի վաստակը Դավիթ Անհաղթի փիլիսոփայական ժառանգության ուսումնասիրության և նրա միջազգային ճանաչման գործում: 1960-1980 թթ. նա հրատարակել է Դավիթ Անհաղթի երեք աշխատությունների քննական բնագրերը՝ ռուսերեն գուգահեռ թարգմանությամբ, առաջաբանով ու ծանոթագրություններով: Նա կազմել ու աշխարհաբար թարգմանությամբ հրատարակել է նաև Դավիթ Անհաղթի երկերի միհատորյակը: Նրա առաջաբանով ու ծանոթագրություններով, 1975 թ. Մոսկվայում «Փիլիսոփայական ժառանգություն» մատենաշարով ռուսերեն լույս է տեսել հայ մտածողի երկերի ընտրանին: Դավիթ Անհաղթի ծննդյան 1500-ամյա հորեկյանի առթիվ Ս. Արևշատյանը պատրաստել, ծանոթագրել և ծավալուն առաջաբանով հրատարակել է Դավիթ Անհաղթի փիլիսոփայական չորս երկերի գրաբար միհատորյակը: Բացի դրանից, նա հրատարակել է Դավիթ Անհաղթի փիլիսոփայական ժառանգության վերաբերյալ իր բարձրարժեք հետազոտությունները: Ծնորհիվ այս աշխատանքի հնարավոր դարձավ բարձր մակարդակով ու աննախադեպ միջազգային հնչեղությամբ կազմակերպել Դավիթ Անհաղթի ծննդյան 1500-ամյա հորեկյանի տոնակատարությունը:

Իր հետազոտություններում Ս. Արևշատյանը հայ փիլիսոփայական միտքը մշտապես դիտարկել է հայ հոգևոր մշակույթի համակարգում և այն ներկայացրել որպես հայ մշակույթի բաղկացուցիչ մաս: Այս մոտեցումը գիտնականը իրագործել է՝ մասնակցելով «Հայ ժողովրդի պատմություն» ակադեմիական ութհատորյակի ստեղծմանը: Ս. Արևշատյանը այդ հրատարակության երկրորդ, երրորդ և չորրորդ հատորներում ամփոփ ներկայացրել է V-XVIII դդ. հայ փիլիսոփայության պատմությունը:

Ս. Արևշատյանի գիտական գործունեության կարևոր կողմերից են հայ մշակույթի և փիլիսոփայության նվաճումները ներկայացնելը, գիտական հանրությանը հայ հոգևոր արժեքներին ծանոթացնելը: Նա դասախոսություններ է կարդացել արտասահմանյան շատ երկրներում, գիտական զեկուցումներով և հաղորդումներով մասնակցել միջազգային գիտաժողովների՝ ամենուր ներկայացնելով հայ մշակույթի գանձերը, ցույց տալով դրանց համամարդկային արժանիքները:

Մեծ է նաև նրա ավանդը երիտասարդ հայագետների պատրաստման գործում: Ընդառաջել, ոգևորել ու խրախուսել է երիտասարդ գիտնականներին, հաճախ էլ, չնայած իր բազմազբաղվածությանը, նրանց ատենախոսությունների պաշտպանության ժամանակ հանդես եկել որպես պաշտոնական ընդդիմախոս: Պրոֆեսոր Ս. Արևշատյանի ղեկավարությամբ տասնյակ գիտաշխատողներ պաշտպանել են թեկնածուական ու դոկտորական ատենախոսություններ:

Ակադեմիկոս Ս. Արևշատյանը շարունակում է երիտասարդական ավյունով, իրեն բնորոշ բարեխղճությամբ ու պատասխանատվությամբ իր «խաչը կրել»: Հայագիտության նվիրյալը միայն վերջին տասնամյակում հրատարակել է կոթողային մի շարք աշխատություններ՝ Ազաթանգեղոսի «Հայոց պատմության» ռուսերեն թարգմանությունը (հեղինակակից՝ Ք. Տեր-Դավթյան, 2004 թ.), Մեսրոպ Մաշտոցին վերագրվող՝ «Սուրբ Գրիգորի վարդապետության» աշխարհաբար նոր թարգմանությունը (2007 թ.), որը նա կատարել է Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի «Հայ եկեղեցու հայրեր» մատենաշարի ծրագրի համար: Միջնադարյան հայ փիլիսոփայության վերաբերյալ իր հետազոտությունները ամփոփել է «Հայոց փիլիսոփայության պատմություն. Հին շրջան և միջնադար» (հեղինակակից՝ Կ. Միրումյան, 2007 թ.) աշխատությունում:

Հավատացած ենք, որ նա գիտական հանրությանը շուտով կգարմացնի իր նոր հրապարակումներով ու արժեքավոր աշխատություններով:

ԶԱՔԱՐՅԱՆ Ս. Ա.

Փիլիսոփայական գիտությունների դոկտոր